Վիճակաւոր Առաջնորդ Հայոց Շամախւոյ թեմի
Համար 150
ի 1 մայիսի 1888 ամի ի Բ. Բաղու

Սեծապատիւ հիմնադիր անդամոյ Հոգաբարձութեան Բուդաղեան վանական դպրոցին Սաղիանի վանից։

Պ. Մովսէս Գալստեան Բուդաղեանց.

Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Մակար համաձայն յայտարարութեան իմոյ յ31 յունվարի այսր 1888 ամի հմ. 50 կոնդակաւ իւրով ի 6 ապրիլի անցելոյ հմ. 146, յայտնելով զհաստատութենէ հիմնական կանոնաց Բուդաղեան վանական երկդասեան ուսումնարանի վանից Ս. Ստեփաննոսի՝ որ ի Սաղիան՝ առաքել բարեհաճել է առ մեզ զնոյն իսկ կանոնադրութիւնն հաստատեալն ի նոյն թիւ ամսոյ հմ. 147, վասն պահելոյ զայն ի գործս մեր կամ ի վիճակային ատենին Շամախւոյ թեմի, և զպատճէնս այնորիկ յանձնել Հոգաբարձութեան Բուդաղեան վանական դպրոցին և վանահօրն այնր՝ վանից վասն գործադրութեան։

Արդ՝ ըստ որում ի վեցերրորդ (Զ) յօդուածոյ կանոնադրութեանն այնմիկ տեսանի, զի առաջին յանդամոց Հոգաբարձութեան պարտի լինիլ ի Բուդաղեան ազգատոհմէ իրաւամբ շնորհելոյ Ձեր և եղբարց Ձերոց զ10,000 ռուբլիս յապահովութիւն այնմիկ դպրոցին, և դուք առաջինն էք յեղբարս Ձեր. ուստի համաձայն խորհրդոյ յարգոյ եղբարց Ձերոց պ. Եղիայի և Ենովքայ, և եղբօր որդւոյ Ձերոյ Սմբատայ և Երուանդայ՝ հաստատեմք զՔեզ ի պաշտաման հիմնադիր անդամոց Հոգաբարձութեան Բուդաղեան վանական դպրոցին Սաղիանի վանից և առաքելով առ Ձեզ զվաւերացեալ պատճէն կոնդակին և կանոնադրութեան այնմիկ՝ հրաւիրեմք զՁեզ խորհրդակցութեամբ ընդ միւս անդամոց Հոգաբարձութեան այնմիկ դպրոցին՝ որ ի Բաղու քաղաքի պարոն Գրիգորի Սաղաթիէլեան Ասլանեանց՝ փոյթ և խնամ ունել պատրաստութեան շինութեան[1]) և պարա-

---

[1]) Բուդաղեան եղբարք յ1894 ամն՝ թէ եւ ժամանակ չունեցան դպրոցի շինութիւնը պատրաստել. բայց ուսումն շարունակեցաւ վանուց սենեկաց մէջ, եւ այժմ եւս շարունակի։